

Կ-945-23.04.2021,24.05.2021-ՊԻ-011

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՔԸ

«ԻՐԱՎԱԲԱՆԱԿԱՆ ԱՆՁԱՆՑ ՊԵՏԱԿԱՆ ԳՐԱՆՑՄԱՆ, ԻՐԱՎԱԲԱՆԱԿԱՆ ԱՆՁԱՆՑ ԱՌԱՆՋՆԱՑՎԱԾ ՍՏՈՐԱԲԱԺԱՆՈՒՄՆԵՐԻ, ՀԻՄՆԱՐԿՆԵՐԻ ԵՎ ԱՆՀԱՏ ՁԵՌՆԱՐԿԱՏԵՐԵՐԻ ՊԵՏԱԿԱՆ ՀԱՇՎԱՌՄԱՆ ՄԱՍԻՆ» ՕՐԵՆՔՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԵՎ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հոդված 1. «Իրավաբանական անձանց պետական գրանցման, իրավաբանական անձանց առանձնացված ստորաբաժանումների, հիմնարկների և անհատ ձեռնարկատերերի պետական հաշվառման մասին» 2001 թվականի ապրիլի 3-ի ՀՕ-169 օրենքի (այսուհետ՝ Օրենք) 3-րդ հոդվածի 1-ին մասում՝

1) 7-րդ կետից հանել «օրենքով նախատեսված դեպքերում՝ իրավաբանական անձանց իրական սեփականատերերի,» բառերը.

2) ուժը կորցրած ճանաչել 23-րդ և 24-րդ կետերը.

3) 25-րդ կետի «ա» և «բ» ենթակետերը շարադրել հետևյալ խմբագրությամբ.

«ա. որոնցից մեկին ուղղակի կամ անուղղակի պատկանում է մյուսի կանոնադրական կապիտալում 20 և ավելի տոկոս մասնակցություն.

բ. որոնցից մեկի կանոնադրական կապիտալում մասնակցության 20 և ավելի տոկոսն ուղղակի կամ անուղղակի պատկանում է ֆիզիկական անձին, որին ուղղակի կամ անուղղակի կերպով պատկանում է նաև մյուս իրավաբանական անձի կանոնադրական կապիտալում 20 և ավելի տոկոս մասնակցություն. ».

4) 26-րդ կետը շարադրել հետևյալ խմբագրությամբ.

«26) փոխկապակցված ֆիզիկական և իրավաբանական անձինք՝ ֆիզիկական և իրավաբանական անձինք, եթե՝

ա. ֆիզիկական անձին ուղղակի կամ անուղղակի պատկանում է 20 և ավելի տոկոս մասնակցություն իրավաբանական անձի կանոնադրական կապիտալում.

բ. ֆիզիկական անձն օրենքով չարգելված այլ ձևով հնարավորություն ունի կանխորոշելու իրավաբանական անձի որոշումները.

գ. ֆիզիկական և իրավաբանական անձը գործել են համաձայնեցված՝ ելնելով ընդհանուր տնտեսական շահերից.». .

5) 27-րդ կետը շարադրել հետևյալ բովանդակությամբ.

«27) փոխկապակցված ֆիզիկական անձինք՝ անձը և նրա ամուսինը, անչափահաս զավակը, անձի խնամակալության կամ հոգաբարձության տակ գտնվող անձը, անձի հետ մեկ տարվա ընթացքում 180 և ավել օր համատեղ բնակվող յուրաքանչյուր չափահաս անձ, ինչպես նաև ֆիզիկական անձինք, որոնք գործել են համաձայնեցված՝ ելնելով ընդհանուր տնտեսական շահերից.». .

6) 28-րդ կետը շարադրել հետևյալ բովանդակությամբ.

«28) միջանկյալ իրավաբանական անձ՝ իրավաբանական անձ և իրական շահառու շղթայում գործող ցանկացած այլ իրավաբանական անձ.». :

Հոդված 2. Օրենքի 6-րդ հոդվածը շարադրել հետևյալ բովանդակությամբ.

«Հոդված 6. զրանցամատյանում պահվող տվյալների հրապարակայնությունը

1. Պետական միասնական գրանցամատյանում պահպանվող տեղեկությունները հրապարակային են, բացառությամբ ֆիզիկական անձանց անձնագրային տվյալների, սոցիալական քարտի համարի (<Ծ<), նրանց բնակության և հաշվառման հասցեների և կապի միջոցների մասին տեղեկությունների:

2. Տեղեկությունները, ինչպես նաև գրանցամատյանից քաղվածքները տրամադրվում են սույն օրենքով նախատեսված կարգով:»:

Հոդված 3. Օրենքի 26-րդ հոդվածում՝

1) 1-ին մասը լրացնել հետևյալ բովանդակությամբ 24-րդ կետով.

«24) տեղեկություններ իրավաբանական անձի իրական շահառուների վերաբերյալ (անունը, ազգանունը, քաղաքացիությունը, ծննդյան ամսաթիվը, անձը հաստատող փաստաթղթի տվյալները, ՀԾՀ, բնակության (հաշվառման) վայրը, կապի միջոցները, իրական շահառու դառնալու ամսաթիվը, իրական շահառու հանդիսանալու հիմքերը):».

2) 20-27-րդ մասերն ուժը կորցրած ճանաչել.

3) լրացնել 29-րդ մասով հետևյալ բովանդակությամբ.

«29. Կենտրոնական բանկի կողմից գրանցվող իրավաբանական անձանց իրական շահառուների վերաբերյալ սույն հոդվածի 1-ին մասի 24-րդ կետով նախատեսված տեղեկությունները պետական ռեգիստրի գործակալությանը տրամադրում է Կենտրոնական բանկը:»:

Հոդված 4. Օրենքի 39-րդ հոդվածի 3.1-ին մասն ուժը կորցրած ճանաչել:

Հոդված 5. Օրենքը լրացնել հետևյալ բովանդակությամբ 12.1-ին գլխով.

«ԳԼՈՒԽ 12.1

ԳՐԱՆՑԱՄԱՏՅԱՆՈՒՄ ԻՐԱՎԱԲԱՆԱԿԱՆ ԱՆՁԱՆՑ ԻՐԱԿԱՆ ՇԱՀԱՌՈՒՆԵՐԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ՏԵՂԵԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԳՐԱՌՈՒՄԸ

Հոդված 60.1. Իրավաբանական անձանց իրական շահառուները

1. Սույն օրենքի իմաստով իրական շահառու է համարվում «Փողերի լվացման և ահաբեկչության ֆինանսավորման դեմ պայքարի մասին» օրենքով սահմանված չափանիշներով իրավաբանական անձի իրական շահառու հանդիսացող անձը:

2. Ոլորտային օրենսդրությամբ կարող են սահմանվել իրական շահառուների բացահայտման՝ «Փողերի լվացման և ահաբեկչության ֆինանսավորման դեմ պայքարի մասին» օրենքով նախատեսված չափանիշներից խիստ չափանիշներ, եթե դա բխում է

իրավաբանական անձի գործունեության ոլորտի առանձնահատկություններից կամ Հայաստանի Հանրապետության միջազգային պայմանագրերից:

3. Սույն գլխի դրույթները չեն տարածվում Կենտրոնական բանկի կողմից գրանցվող իրավաբանական անձանց վրա: Կենտրոնական բանկի կողմից գրանցվող իրավաբանական անձանց իրական շահառուների բացահայտման, գրանցման և տվյալների արժանահավատության ապահովման հետ կապված հարաբերությունները կարգավորվում են այդ իրավաբանական անձանց գործունեությունը կարգավորող օրենսդրությամբ:

Հոդված 60.2. Իրավաբանական անձանց իրական շահառուների հայտնաբերումը

1. Հայաստանի Հանրապետության տարածքում գրանցված իրավաբանական անձը պարտավոր է տիրապետել արժանահավատ տեղեկությունների իր իրական շահառուների և նրանց՝ իրավաբանական անձի իրական շահառու հանդիսանալու հիմքերի վերաբերյալ:

2. Սույն հոդվածի 1-ին մասով նախատեսված տեղեկությունների բացահայտման համար իրավաբանական անձը պարտավոր է պարբերաբար, բայց ոչ պակաս, քան տարին մեկ անգամ, իրականացնել պատշաճ ուսումնասիրություն՝ պահպանելով իրականացված ուսումնասիրությանն առնչվող բոլոր փաստաթղթերը: Իրական շահառուների հայտնաբերմանն առնչվող փաստաթղթերը ենթակա են պահպանման առնվազն հինգ տարի ուսումնասիրության իրականացման պահից, բայց ոչ պակաս, քան հինգ տարի սկսած այն պահից, երբ անձը, ում դրանք առնչվում են, դադարում է լինել իրավաբանական անձի իրական շահառու: Սույն մասով նախատեսված փաստաթղթերն իրենց լիազորությունների իրականացման նպատակով ներկայացված պահանջի հիման վրա անմիջապես, բայց ոչ ուշ, քան հնգօրյա ժամկետում, հասանելի են դարձվում գործակալությանը և պետական մարմիններին:

3. Սույն հոդվածի 2-րդ մասով նախատեսված պատշաճ ուսումնասիրության իրականացման ընթացքում իրավաբանական անձը պարտավոր է հարցումներով դիմել այն անձանց, որոնց իրական շահառու հանդիսանալու վերաբերյալ առկա են կասկածներ, ինչպես նաև իրավաբանական անձի մասնակիցներին կամ մասնակից իրավաբանական անձանց ներկայացուցիչներին, որոնք կարող են տիրապետել

իրավաբանական անձի իրական շահառուների վերաբերյալ տեղեկությունների: Սույն մասով նախատեսված հարցում ստացած անձինք պարտավոր են քսան օրվա ընթացքում պատասխանել հարցմանը և հարցումն իրականացրած իրավաբանական անձին տրամադրել իրական շահառուների վերաբերյալ հայտարարագրի ներկայացման համար անհրաժեշտ տեղեկություններ և փաստաթղթեր:

4. Իրավաբանական անձի իրական շահառուները պարտավոր են իրենց իրական շահառուի կարգավիճակ ձեռք բերելու կամ իրենց առնչվող տվյալների փոփոխվելու պահից քսան օրվա ընթացքում այդ մասին տեղեկացնել հայտարարագրի ներկայացնելու պարտականություն ունեցող իրավաբանական անձին և տրամադրել իրական շահառուների վերաբերյալ հայտարարագրի ներկայացման համար անհրաժեշտ տեղեկություններ և փաստաթղթեր:

Հոդված 60.3. Իրավաբանական անձանց իրական շահառուների բացահայտումը

1. Հայաստանի Հանրապետության տարածքում գրանցված իրավաբանական անձը պարտավոր է սույն օրենքով նախատեսված պատշաճ ուսումնասիրության արդյունքներով գործակալություն ներկայացնել իր իրական շահառուների վերաբերյալ հայտարարագիր:

2. Իրական շահառուների վերաբերյալ հայտարարագրում ներառվում են տեղեկություններ՝

1) իրավաբանական անձի անունից հայտարարագիրը ներկայացնող անձի վերաբերյալ (անունը, ազգանունը և պաշտոնը).

2) իրավաբանական անձի բաժնետոմսերի ցուցակման կամ կարգավորվող շուկայում առևտրին թույլատրման (այսուհետ՝ ցուցակման) վերաբերյալ.

3) իրավաբանական անձն ամբողջությամբ վերահսկող իրավաբանական անձի բաժնետոմսերի ցուցակման վերաբերյալ, ցուցակված բաժնետոմսերով իրավաբանական անձի վերաբերյալ (իրավաբանական անձի պետական գրանցման տվյալները և դրա գործադիր մարմնի ղեկավարի անունը և ազգանունը), ինչպես նաև այդպիսի իրավաբանական անձի մասնակցության ծավալների վերաբերյալ.

4) իրավաբանական անձի կանոնադրական կապիտալում պետության, համայնքի կամ միջազգային կազմակերպության մասնակցության ծավալների վերաբերյալ.

5) իրավաբանական անձի իրական շահառուների վերաբերյալ (անունը, ազգանունը, քաղաքացիությունը, ծննդյան ամսաթիվը, անձը հաստատող փաստաթղթի տվյալները, ՀԾՀ, բնակության (հաշվառման) վայրը, կապի միջոցները՝ առկայության դեպքում, իրական շահառու դառնալու ամսաթիվը).

6) անձի իրական շահառու հանդիսանալու հիմքերի վերաբերյալ և իրավաբանական անձին առանձին կամ իր հետ փոխկապակցված ֆիզիկական կամ իրավաբանական անձի հետ համատեղ վերահսկելու վերաբերյալ.

7) միջանկյալ իրավաբանական անձանց վերաբերյալ (իրավաբանական անձի պետական գրանցման տվյալները և դրա գործադիր մարմնի ղեկավարի անունը և ազգանունը).

3. Ցուցակված բաժնետոմսերով առևտրային կազմակերպությունները կամ այնպիսի առևտրային կազմակերպությունները, որոնց ամբողջությամբ վերահսկում է ցուցակված բաժնետոմսերով մեկ այլ առևտրային կազմակերպություն, ներկայացնում են միայն սույն հոդվածի 2-րդ մասի 1-ին, 2-րդ, 3-րդ և 7-րդ կետերով նախատեսված տեղեկությունները, եթե իրավաբանական անձի բաժնետոմսերը ցուցակված են կարգավորվող շուկայում, որտեղ իրական շահառուների բացահայտման չափանիշները համարժեք են Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ նախատեսված չափանիշներին:

4. Իրական շահառուների վերաբերյալ հայտարարագիրը ենթակա է ներկայացման սույն օրենքով սահմանված կարգով իրավաբանական անձի գրանցման պահից 40 օրվա ընթացքում: Իրական շահառուների վերաբերյալ տվյալների փոփոխման դեպքում դրանք ենթակա են հայտարարագրման իրավաբանական անձին հայտնի դառնալուց հետո անմիջապես, բայց ոչ ուշ, քան 40 օրվա ընթացքում:

5. Անկախ սույն հոդվածի 4-րդ մասով նախատեսված ժամկետներից՝ մինչև յուրաքանչյուր տարվա փետրվարի 20-ը իրավաբանական անձը պարտավոր է գործակալություն ներկայացնել.

1) հաստատում առ այն, որ իրական շահառուների վերաբերյալ գործակալություն ներկայացված վերջին հայտարարագիրը պարունակում է արդիական տեղեկություններ նախորդ տարվա դեկտեմբերի 31-ի դրությամբ, կամ.

2) փոփոխված տեղեկություններ իրավաբանական անձի իրական շահառուների վերաբերյալ:

6. Իրավաբանական անձանց իրական շահառուների վերաբերյալ հայտարարագրի ձևը, դրա լրացման և ներկայացման կարգը, իրական շահառուների վերաբերյալ գործակալություն ներկայացված վերջին հայտարարագրի հաստատման կարգը, իրական շահառուների բացահայտման համարժեք չափանիշներով կարգավորվող շուկաների ցանկը սահմանում է արդարադատության նախարարը: Սույն մասով նախատեսված հայտարարագրի լրացման կարգում արդարադատության նախարարի կողմից կարող են նաև սահմանվել «Գնումների մասին» օրենքի հիման վրա իրական շահառուների վերաբերյալ հայտարարագրի ներկայացման պարտականություն ունեցող ոչ ռեզիդենտ իրավաբանական անձանց կողմից հայտարարագրի լրացման առանձնահատկությունները:

**Հոդված 60.4. Իրավաբանական անձանց իրական շահառուների
վերաբերյալ տեղեկությունների պետական գրանցումը և
հրապարակումը**

1. Իրավաբանական անձանց իրական շահառուների վերաբերյալ տեղեկությունների պետական գրանցման համար գործակալություն է ներկայացվում իրավաբանական անձի իրական շահառուների վերաբերյալ հայտարարագիրը:

2. Իրական շահառուների փոփոխության գրանցման համար գործակալություն է ներկայացվում`

1) իրավաբանական անձի իրական շահառուների վերաբերյալ նոր հայտարարագիրը.

2) պետական տուրքի վճարումը հավաստող փաստաթուղթ:

3. Եթե իրավաբանական անձի իրական շահառուն օտարերկրյա ֆիզիկական անձ է, ապա պետական գրանցման համար, սույն հոդվածի 1-ին և 2-րդ

մասերով նախատեսված փաստաթղթերից բացի, ներկայացվում է տվյալ անձի անձնագրի կամ անձը հաստատող այլ փաստաթղթի պատճենը՝ վավերացված և հայերեն թարգմանված:

4. Մետաղական օգտակար հանածոյի արդյունահանման ոլորտային պահանջների հիման վրա գործակալություն ներկայացված իրական շահառուների վերաբերյալ տեղեկությունները, բացառությամբ հրապարակային չհամարվող տեղեկությունների, հասանելի են տեղեկատվական համակարգի միջոցով գործակալության պաշտոնական կայքից առանց պետական տուրք վճարելու:

Հոդված 60.5. Իրավաբանական անձանց իրական շահառուների վերաբերյալ տեղեկությունների արժանահավատության ապահովումը

1. Գործակալությունն իրականացնում է ընթացիկ վերահսկողություն իրավաբանական անձանց իրական շահառուների վերաբերյալ տեղեկությունների արժանահավատության ապահովման նպատակով:

2. Պետական մարմինը, որն իր լիազորությունների իրականացման ընթացքում իրավաբանական անձանց իրական շահառուների վերաբերյալ տեղեկությունների արժանահավատության առնչությամբ հայտնաբերում է կասկածներ, այդ մասին անմիջապես ծանուցում է գործակալությունը:

3. Գործակալությունն իր նախաձեռնությամբ կամ դիմումի հիման վրա կարող է հարուցել վարույթ իրական շահառուների հայտարարագրման սույն օրենքով նախատեսված պահանջների պահպանումը ստուգելու նպատակով, իսկ խախտում հայտնաբերելու դեպքում՝ կիրառել օրենքով սահմանված վարչական պատասխանատվության միջոցներ:

4. Սույն հոդվածով նախատեսված գործառույթներն իրականացնելիս գործակալությունն իրավասու է պետական և տեղական ինքնակառավարման մարմիններից պահանջելու և ստանալու իրական շահառուների վերաբերյալ հայտարարագիր ներկայացնելու պարտականություն ունեցող իրավաբանական անձանց առնչվող տեղեկություններ, այդ թվում՝ հարկային և մաքսային գաղտնիք հանդիսացող տեղեկություններ:

5. Սույն հոդվածով նախատեսված գործառույթներն իրականացնելիս Հայաստանի Հանրապետության քրեական օրենսգրքով արգելված արարքի առերևույթ հատկանիշներ հայտնաբերելու դեպքում, ինչպես նաև եթե տեղեկությունների արժանահավատության առնչությամբ կասկածների առկայության դեպքում իրավաբանական անձը գործակալության պահանջով չի ներկայացնում իր հայտարարագրի հիմքում ընկած պատշաճ ուսումնասիրության փաստաթղթերը կամ դրանք բավարար չեն կասկածները փարատելու համար, գործակալությունը նյութերը եռօրյա ժամկետում ուղարկում է գլխավոր դատախազություն՝ ընդունելով վարչական վարույթը կասեցնելու մասին որոշում:

6. Սույն օրենքի 60.3-րդ հոդվածի 5-րդ մասով նախատեսված պարտականությունը երեք տարի անընդմեջ չկատարելու, ինչպես նաև սույն գլխի կանոններն այլ կերպ բազմակի կամ կոպիտ խախտելու դեպքում գործակալությունը կարող է դիմել դատարան՝ իրավաբանական անձին լուծարելու պահանջով:

7. Մետաղական օգտակար հանածոյի արդյունահանման ոլորտի կազմակերպության առնչությամբ կայացված վարչական ակտն անբողոքարկելի դառնալուց հետո եռօրյա ժամկետում գործակալությունն այդ մասին տեղեկացնում է ընդերքօգտագործման ոլորտի պետական կառավարման լիազոր մարմնին:»:

Հոդված 6. Օրենքի 61-րդ հոդվածում՝

1) 1-ին մասը շարադրել հետևյալ բովանդակությամբ.

«1. Պետական միասնական գրանցամատյանի հրապարակային տեղեկությունները բաց են համընդհանուր ծանոթացման համար:»

2) 2-րդ մասը շարադրել հետևյալ բովանդակությամբ.

«2. Առանց պետական տուրք վճարելու տեղեկատվական համակարգի միջոցով գործակալության պաշտոնական կայքից հասանելի են իրավաբանական անձի, անհատ ձեռնարկատիրոջ և պետական մարմնի վերաբերյալ պետական միասնական գրանցամատյանի հետևյալ տեղեկությունները՝

1) անունը, ազգանունը կամ անվանումը և կազմակերպատիրավական ձևը.

2) պետական գրանցման (հաշվառման) ամսաթիվը.

3) պետական գրանցման (հաշվառման) համարը.

4) հարկ վճարողի հաշվառման համարը.

5) ձեռնարկության կոդային դասակարգիչը (ՁԿԴ).

5) գտնվելու վայրը կամ ձեռնարկատիրական գործունեությամբ զբաղվելու հասցեն.

6) իրավաբանական անձի իրական շահառուի անունը, ազգանունը, քաղաքացիությունը, իրական շահառու դառնալու ամսաթիվը, իրավաբանական անձի իրական շահառու հանդիսանալու հիմքերը.

7) տեղեկություններ լուծարման գործընթացում գտնվելու մասին կամ հաշվառումից հանվելու մասին:».

3) 3-րդ մասում «տրամադրվում են» բառից հետո լրացնել «թղթային կրիչով կամ տեղեկատվական համակարգի միջոցով գործակալության պաշտոնական կայքից» բառերով:

Հոդված 7. Օրենքի 62-րդ հոդվածի 3-րդ մասի 12.1-ին կետն ուժը կորցրած ճանաչել:

Հոդված 8. Օրենքի 66-րդ հոդվածը շարադրել հետևյալ բովանդակությամբ.

«Հոդված 66. Փողերի լվացման և ահաբեկչության ֆինանսավորման դեմ պայքարի նպատակներով տրամադրվող տեղեկությունները

1. Գործակալությունը «Փողերի լվացման և ահաբեկչության ֆինանսավորման դեմ պայքարի մասին» օրենքով սահմանված լիազոր մարմնին է տրամադրում պարտադիր տեղեկացման ենթակա գործարքի և կասկածելի գործարքի կամ գործարար հարաբերության վերաբերյալ հաշվետվություն այդ օրենքով սահմանված կարգով:»:

Հոդված 9.

1. Սույն օրենքն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակման օրվան հաջորդող տասներորդ օրը:

2. Հանրային ծառայությունների կարգավորվող ոլորտում գործունեություն իրականացնող, ինչպես նաև տեսալսողական մեդիածառայություն մատուցող իրավաբանական անձանց համար սույն օրենքով նախատեսված պարտականությունները ծագում են 2021 թվականի սեպտեմբերի 1-ից:

3. Սույն հոդվածի 2-րդ մասում չներառված իրավաբանական անձանց համար սույն օրենքով նախատեսված պարտականությունները ծագում են 2022 թվականի հունվարի 1-ից, բացառությամբ սույն հոդվածի 4-րդ մասում նախատեսված դեպքերի:

4. Միայն ֆիզիկական անձ մասնակիցներ ունեցող սահմանափակ պատասխանատվությամբ ընկերությունների, ինչպես նաև ոչ առևտրային կազմակերպությունների համար սույն օրենքով նախատեսված պարտականությունները ծագում են 2023 թվականի հունվարի 1-ից:

5. Սույն հոդվածի 2-4-րդ մասով նախատեսված օրվա դրությամբ Հայաստանի Հանրապետության տարածքում գրանցված իրավաբանական անձինք պարտավոր են իրական շահառուների վերաբերյալ սույն օրենքով նախատեսված հայտարարագիրը ներկայացնել սույն օրենքով նախատեսված պարտականությունները ծագելու օրվանից երկու ամսվա ընթացքում:

6. Իրավաբանական անձանց իրական շահառուների վերաբերյալ հայտարարագրի ձևը, դրա լրացման և ներկայացման կարգը, իրական շահառուների վերաբերյալ գործակալություն ներկայացված վերջին հայտարարագրի հաստատման կարգը, իրական շահառուների բացահայտման համարժեք չափանիշներով կարգավորվող շուկաների ցանկը արդարադատության նախարարի կողմից սահմանվում է սույն օրենքն ուժի մեջ մտնելուց հետո երկամսյա ժամկետում:

7. Եթե մինչև սույն օրենքի ուժի մեջ մտնելն իրավաբանական անձի կողմից գործակալություն է ներկայացվել իրական սեփականատերերի վերաբերյալ հայտարարագիր, ապա սույն օրենքի հիման վրա այդպիսի իրավաբանական անձի իրական շահառուների վերաբերյալ տեղեկությունների գրանցումը համարվում է իրավաբանական անձի իրական շահառուների փոփոխության գրանցում ««Իրավաբանական անձանց պետական գրանցման, իրավաբանական անձանց առանձնացված ստորաբաժանումների, հիմնարկների և անհատ ձեռնարկատերերի պետական հաշվառման մասին» օրենքի 60.4-րդ հոդվածի 2-րդ մասի իմաստով:

8. Մինչև սույն օրենքի ուժի մեջ մտնելն իրական սեփականատերերի վերաբերյալ հայտարարագիր ներկայացված անձանց վրա սույն օրենքով նախատեսված կարգավորումները տարածվում են 2021 թվականի սեպտեմբերի 1-ից: Սույն մասով նախատեսված իրավաբանական անձինք պարտավոր են իրական շահառուների վերաբերյալ սույն օրենքով նախատեսված հայտարարագիրը ներկայացնել մինչև 2022 թվականի փետրվարի 20-ը:

9. Կենտրոնական բանկը սույն օրենքի ուժի մեջ մտնելու պահին գործող իր կողմից գրանցած իրավաբանական անձանց իրական շահառուների վերաբերյալ տվյալները տրամադրում է մինչև 2022 թվականի հունիսի 1-ը:

10. Մինչև սույն հոդվածի համապատասխանաբար 2-4-րդ մասով նախատեսված ժամկետների վրա հասնելը իրավաբանական անձը պարտավոր է պետական գրանցման, կանոնադրական կապիտալի կամ մասնակիցների կազմի փոփոխվելու դեպքում «Փողերի լվացման և ահաբեկչության ֆինանսավորման դեմ պայքարի մասին» օրենքով սահմանված կարգով գործակալություն ներկայացնել իրավաբանական անձի իրական շահառուների վերաբերյալ հայտարարություն: Հայտարարության մեկ օրինակը տրամադրվում է Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկին՝ վերջինիս պահանջով:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՔԸ

«ԻՐԱՎԱԲԱՆԱԿԱՆ ԱՆՁԱՆՑ ՊԵՏԱԿԱՆ ԳՐԱՆՑՄԱՆ, ԻՐԱՎԱԲԱՆԱԿԱՆ ԱՆՁԱՆՑ ԱՌԱՆՁՆԱՑՎԱԾ ՍՏՈՐԱԲԱԺԱՆՈՒՄՆԵՐԻ, ՀԻՄՆԱՐԿՆԵՐԻ ԵՎ ԱՆՀԱՏ ՁԵՌՆԱՐԿԱՏԵՐԵՐԻ ՊԵՏԱԿԱՆ ՀԱՇՎԱՌՄԱՆ ՄԱՍԻՆ» ՕՐԵՆՔՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԵՎ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հոդված 10. «Իրավաբանական անձանց պետական գրանցման, իրավաբանական անձանց առանձնացված ստորաբաժանումների, հիմնարկների և անհատ ձեռնարկատերերի պետական հաշվառման մասին» 2001 թվականի ապրիլի 3-ի ՀՕ-169 օրենքի (այսուհետ՝ Օրենք) 3-րդ հոդվածի 1-ին մասում՝

7) 7-րդ կետից հանել «օրենքով նախատեսված դեպքերում՝ իրավաբանական անձանց իրական սեփականատերերի,» բառերը.

8) ուժը կորցրած ճանաչել 23-րդ և 24-րդ կետերը.

9) 25-րդ կետի «ա» և «բ» ենթակետերը շարադրել հետևյալ խմբագրությամբ.

«ա. որոնցից մեկին ուղղակի կամ անուղղակի պատկանում է մյուսի կանոնադրական կապիտալում 20 և ավելի տոկոս մասնակցություն.

բ. որոնցից մեկի կանոնադրական կապիտալում մասնակցության 20 և ավելի տոկոսն ուղղակի կամ անուղղակի պատկանում է ֆիզիկական անձին, որին ուղղակի կամ անուղղակի կերպով պատկանում է նաև մյուս իրավաբանական անձի կանոնադրական կապիտալում 20 և ավելի տոկոս մասնակցություն. ».

10) 26-րդ կետը շարադրել հետևյալ խմբագրությամբ.

«26) փոխկապակցված ֆիզիկական և իրավաբանական անձինք՝ ֆիզիկական և իրավաբանական անձինք, եթե՝

ա. ֆիզիկական անձին ուղղակի կամ անուղղակի պատկանում է 20 և ավելի տոկոս մասնակցություն իրավաբանական անձի կանոնադրական կապիտալում.

բ. ֆիզիկական անձն օրենքով չարգելված այլ ձևով հնարավորություն ունի կանխորոշելու իրավաբանական անձի որոշումները.

գ. ֆիզիկական և իրավաբանական անձը գործել են համաձայնեցված՝ ելնելով ընդհանուր տնտեսական շահերից.».

11) 27-րդ կետը շարադրել հետևյալ բովանդակությամբ.

«27) **փոխկապակցված ֆիզիկական անձինք՝** անձը և նրա ամուսինը, անչափահաս զավակը, անձի խնամակալության կամ հոգաբարձության տակ գտնվող անձը, անձի հետ մեկ տարվա ընթացքում 180 և ավել օր համատեղ բնակվող յուրաքանչյուր չափահաս անձ, ինչպես նաև ֆիզիկական անձինք, որոնք գործել են համաձայնեցված՝ ելնելով ընդհանուր տնտեսական շահերից.».

12) 28-րդ կետը շարադրել հետևյալ բովանդակությամբ.

«28) **միջանկյալ իրավաբանական անձ՝** իրավաբանական անձ և իրական շահառու շղթայում գործող ցանկացած այլ ~~ֆիզիկական կամ~~ իրավաբանական անձ ~~կամ իրավաբանական անձ չհանդիսացող այլ իրավաբանական կազմավորում~~.»:

Հոդված 11. Օրենքի 6-րդ հոդվածը շարադրել հետևյալ բովանդակությամբ.

«Հոդված 6. Գրանցամատյանում պահվող տվյալների հրապարակայնությունը

1. Պետական միասնական գրանցամատյանում պահպանվող տեղեկությունները հրապարակային են, բացառությամբ ֆիզիկական անձանց անձնագրային տվյալների, սոցիալական քարտի համարի (<Ծ>), նրանց բնակության և հաշվառման հասցեների և կապի միջոցների մասին տեղեկությունների:

2. Տեղեկությունները, ինչպես նաև գրանցամատյանից քաղվածքները տրամադրվում են սույն օրենքով նախատեսված կարգով:»:

Հոդված 12. Օրենքի 26-րդ հոդվածում՝

4) 1-ին մասը լրացնել հետևյալ բովանդակությամբ 24-րդ կետով.

«24) տեղեկություններ իրավաբանական անձի իրական շահառուների վերաբերյալ (անունը, ազգանունը, քաղաքացիությունը, ծննդյան ամսաթիվը, անձը հաստատող

փաստաթղթի տվյալները, ՀԾՀ, բնակության (հաշվառման) վայրը, կապի միջոցները, իրական շահառու դառնալու ամսաթիվը, իրական շահառու հանդիսանալու հիմքերը):».

5) 20-27-րդ մասերն ուժը կորցրած ճանաչել.

6) լրացնել ~~հետևյալ — բովանդակությամբ —~~ 29-րդ մասով հետևյալ բովանդակությամբ.

«29. Կենտրոնական բանկի կողմից գրանցվող իրավաբանական անձանց իրական շահառուների վերաբերյալ սույն հոդվածի 1-ին մասի 24-րդ կետով նախատեսված տեղեկությունները պետական ռեգիստրի գործակալությանը տրամադրում է Կենտրոնական բանկը:»:

Հոդված 13. Օրենքի 39-րդ հոդվածի 3.1-ին մասն ուժը կորցրած ճանաչել:

Հոդված 14. Օրենքը լրացնել հետևյալ բովանդակությամբ 12.1-ին գլխով.

«ԳԼՈՒԽ 12.1

ԳՐԱՆՑԱՄԱՏՅԱՆՈՒՄ ԻՐԱՎԱԲԱՆԱԿԱՆ ԱՆՁԱՆՑ ԻՐԱԿԱՆ ՇԱՀԱՌՈՒՆԵՐԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ՏԵՂԵԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԳՐԱՌՈՒՄԸ

Հոդված 60.1. Իրավաբանական անձանց իրական շահառուները

4. Սույն օրենքի իմաստով իրական շահառու է համարվում «Փողերի լվացման և ահաբեկչության ֆինանսավորման դեմ պայքարի մասին» օրենքով սահմանված չափանիշներով իրավաբանական անձի իրական շահառու հանդիսացող անձը:

5. Ոլորտային օրենսդրությամբ կարող են սահմանվել իրական շահառուների բացահայտման՝ «Փողերի լվացման և ահաբեկչության ֆինանսավորման դեմ պայքարի մասին» օրենքով նախատեսված չափանիշներից խիստ չափանիշներ, եթե դա բխում է իրավաբանական անձի գործունեության ոլորտի առանձնահատկություններից կամ Հայաստանի Հանրապետության միջազգային պայմանագրերից:

6. Սույն գլխի դրույթները չեն տարածվում Կենտրոնական բանկի կողմից գրանցվող իրավաբանական անձանց վրա: Կենտրոնական բանկի կողմից գրանցվող իրավաբանական անձանց իրական շահառուների բացահայտման, գրանցման և տվյալների արժանահավատության ապահովման հետ կապված հարաբերությունները կարգավորվում են այդ իրավաբանական անձանց գործունեությունը կարգավորող օրենսդրությամբ:

Հոդված 60.2. Իրավաբանական անձանց իրական շահառուների հայտնաբերումը

4. Հայաստանի Հանրապետության տարածքում գրանցված իրավաբանական անձը պարտավոր է տիրապետել արժանահավատ տեղեկությունների իր իրական շահառուների և նրանց՝ իրավաբանական անձի իրական շահառու հանդիսանալու հիմքերի վերաբերյալ:

5. Սույն հոդվածի 1-ին մասով նախատեսված տեղեկությունների բացահայտման համար իրավաբանական անձը պարտավոր է պարբերաբար, բայց ոչ պակաս, քան տարին մեկ անգամ, իրականացնել պատշաճ ուսումնասիրություն՝ պահպանելով իրականացված ուսումնասիրությանն առնչվող բոլոր փաստաթղթերը: Իրական շահառուների հայտնաբերմանն առնչվող փաստաթղթերը ենթակա են պահպանման առնվազն հինգ տարի ուսումնասիրության իրականացման պահից, բայց ոչ պակաս, քան հինգ տարի սկսած այն պահից, երբ անձը, ում դրանք առնչվում են, դադարում է լինել իրավաբանական անձի իրական շահառու: Սույն մասով նախատեսված փաստաթղթերն իրենց լիազորությունների իրականացման նպատակով ներկայացված պահանջի հիման վրա անմիջապես, բայց ոչ ուշ, քան հնգօրյա ժամկետում, հասանելի են դարձվում գործակալությանը և պետական մարմիններին:

6. Սույն հոդվածի 2-րդ մասով նախատեսված պատշաճ ուսումնասիրության իրականացման ընթացքում իրավաբանական անձը պարտավոր է հարցումներով դիմել այն անձանց, որոնց իրական շահառու հանդիսանալու վերաբերյալ առկա են կասկածներ, ինչպես նաև իրավաբանական անձի մասնակիցներին կամ մասնակից իրավաբանական անձանց ներկայացուցիչներին, որոնք կարող են տիրապետել իրավաբանական անձի իրական շահառուների վերաբերյալ տեղեկությունների: Սույն մասով նախատեսված հարցում ստացած անձինք պարտավոր են քսան օրվա

ընթացքում պատասխանել հարցմանը և հարցումն իրականացրած իրավաբանական անձին տրամադրել իրական շահառուների վերաբերյալ հայտարարագրի ներկայացման համար անհրաժեշտ տեղեկություններ և փաստաթղթեր:

4. Իրավաբանական անձի իրական շահառուները պարտավոր են իրենց իրական շահառուի կարգավիճակ ձեռք բերելու կամ իրենց առնչվող տվյալների փոփոխվելու պահից ըստ օրվա ընթացքում այդ մասին տեղեկացնել հայտարարագրի ներկայացնելու պարտականություն ունեցող իրավաբանական անձին և տրամադրել իրական շահառուների վերաբերյալ հայտարարագրի ներկայացման համար անհրաժեշտ տեղեկություններ և փաստաթղթեր:

Հոդված 60.3. Իրավաբանական անձանց իրական շահառուների բացահայտումը

7. Հայաստանի Հանրապետության տարածքում գրանցված իրավաբանական անձը պարտավոր է սույն օրենքով նախատեսված պատշաճ ուսումնասիրության արդյունքներով գործակալություն ներկայացնել իր իրական շահառուների վերաբերյալ հայտարարագիր:

8. Իրական շահառուների վերաբերյալ հայտարարագրում ներառվում են տեղեկություններ՝

1) իրավաբանական անձի անունից հայտարարագիրը ներկայացնող անձի վերաբերյալ (անունը, ազգանունը և պաշտոնը).

2) իրավաբանական անձի բաժնետոմսերի ցուցակման կամ կարգավորվող շուկայում առևտրին թույլատրման (այսուհետ՝ ցուցակման) վերաբերյալ.

3) իրավաբանական անձն ամբողջությամբ վերահսկող իրավաբանական անձի բաժնետոմսերի ցուցակման վերաբերյալ, ցուցակված բաժնետոմսերով իրավաբանական անձի վերաբերյալ ([իրավաբանական անձի պետական գրանցման տվյալները և դրա վերաբերյալ](#) գործադիր մարմնի ղեկավարի անունը և ազգանունը), ինչպես նաև այդպիսի իրավաբանական անձի մասնակցության ծավալների վերաբերյալ.

4) իրավաբանական անձի կանոնադրական կապիտալում պետության, համայնքի կամ միջազգային կազմակերպության մասնակցության ծավալների վերաբերյալ.

5) իրավաբանական անձի իրական շահառուների վերաբերյալ (անունը, ազգանունը, քաղաքացիությունը, ծննդյան ամսաթիվը, անձը հաստատող փաստաթղթի տվյալները, ՀԾՀ, բնակության (հաշվառման) վայրը, կապի միջոցները՝ առկայության դեպքում, իրական շահառու դառնալու ամսաթիվը).

6) անձի իրական շահառու հանդիսանալու հիմքերի վերաբերյալ և իրավաբանական անձին առանձին կամ իր հետ փոխկապակցված ֆիզիկական կամ իրավաբանական անձի հետ համատեղ վերահսկելու վերաբերյալ.

7) միջանկյալ իրավաբանական անձանց վերաբերյալ (իրավաբանական անձի պետական գրանցման տվյալները և դրա վերաբերյալ միջանկյալ իրավաբանական անձանց գործադիր մարմնի ղեկավարի անունը և ազգանունը), ~~եթե հայտարարագրում կատարվել է նշում անուղղակի մասնակցության առկայության մասին.~~

9. Ցուցակված բաժնետոմսերով առևտրային կազմակերպությունները կամ այնպիսի առևտրային կազմակերպությունները, որոնց ամբողջությամբ վերահսկում է ցուցակված բաժնետոմսերով մեկ այլ առևտրային կազմակերպություն, ներկայացնում են միայն սույն հոդվածի 2-րդ մասի 1-ին, 2-րդ, 3-րդ և 7-րդ կետերով նախատեսված տեղեկությունները, եթե իրավաբանական անձի բաժնետոմսերը ցուցակված են կարգավորվող շուկայում, որտեղ իրական շահառուների բացահայտման չափանիշները համարժեք են Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ նախատեսված չափանիշներին:

10. Իրական շահառուների վերաբերյալ հայտարարագիրը ենթակա է ներկայացման սույն օրենքով սահմանված կարգով իրավաբանական անձի գրանցման պահից 40 օրվա ընթացքում: Իրական շահառուների վերաբերյալ տվյալների փոփոխման դեպքում դրանք ենթակա են հայտարարագրման իրավաբանական անձին հայտնի դառնալուց հետո անմիջապես, բայց ոչ ուշ, քան 40 օրվա ընթացքում:

11. Անկախ սույն հոդվածի 4-րդ մասով նախատեսված ժամկետներից՝ մինչև յուրաքանչյուր տարվա փետրվարի 20-ը իրավաբանական անձը պարտավոր է գործակալություն ներկայացնել.

1) հաստատում առ այն, որ իրական շահառուների վերաբերյալ գործակալություն ներկայացված վերջին հայտարարագիրը պարունակում է արդիական տեղեկություններ նախորդ տարվա դեկտեմբերի 31-ի դրությամբ, կամ.

2) փոփոխված տեղեկություններ իրավաբանական անձի իրական շահառուների վերաբերյալ:

12. Իրավաբանական անձանց իրական շահառուների վերաբերյալ հայտարարագրի ձևը, դրա լրացման և ներկայացման կարգը, իրական շահառուների վերաբերյալ գործակալություն ներկայացված վերջին հայտարարագրի հաստատման կարգը, [իրական շահառուների բացահայտման համարժեք չափանիշներով կարգավորվող շուկաների ցանկը](#) սահմանում է արդարադատության նախարարը: Սույն մասով նախատեսված [հայտարարագրի լրացման](#) կարգում արդարադատության նախարարի կողմից կարող են նաև սահմանվել «Գնումների մասին» օրենքի հիման վրա իրական շահառուների վերաբերյալ հայտարարագրի ներկայացման պարտականություն ունեցող ոչ ռեզիդենտ իրավաբանական անձանց կողմից հայտարարագրի լրացման առանձնահատկությունները:

Հոդված 60.4. Իրավաբանական անձանց իրական շահառուների վերաբերյալ տեղեկությունների պետական գրանցումը և հրապարակումը

5. Իրավաբանական անձանց իրական շահառուների վերաբերյալ տեղեկությունների պետական գրանցման համար գործակալություն է ներկայացվում իրավաբանական անձի իրական շահառուների վերաբերյալ հայտարարագիրը:

6. Իրական շահառուների փոփոխության գրանցման համար գործակալություն է ներկայացվում`

3) իրավաբանական անձի իրական շահառուների վերաբերյալ նոր հայտարարագիրը.

4) պետական տուրքի վճարումը հավաստող փաստաթուղթ:

7. Եթե իրավաբանական անձի իրական շահառուն օտարերկրյա ֆիզիկական անձ է, ապա պետական գրանցման համար, սույն հոդվածի 1-ին և 2-րդ

մասերով նախատեսված փաստաթղթերից բացի, ներկայացվում է տվյալ անձի անձնագրի կամ անձը հաստատող այլ փաստաթղթի պատճենը՝ վավերացված և հայերեն թարգմանված:

8. Մետաղական օգտակար հանածոյի արդյունահանման ոլորտային պահանջների հիման վրա գործակալություն ներկայացված իրական շահառուների վերաբերյալ տեղեկությունները, բացառությամբ հրապարակային չհամարվող տեղեկությունների, հասանելի են տեղեկատվական համակարգի միջոցով գործակալության պաշտոնական կայքից առանց պետական տուրք վճարելու:

**Հոդված 60.5. Իրավաբանական անձանց իրական շահառուների
վերաբերյալ տեղեկությունների արժանահավատության
ապահովումը**

8. Գործակալությունն իրականացնում է ընթացիկ վերահսկողություն իրավաբանական անձանց իրական շահառուների վերաբերյալ տեղեկությունների արժանահավատության ապահովման նպատակով:

9. Պետական մարմինը, որն իր լիազորությունների իրականացման ընթացքում իրավաբանական անձանց իրական շահառուների վերաբերյալ տեղեկությունների արժանահավատության առնչությամբ հայտնաբերում է կասկածներ, այդ մասին անմիջապես ծանուցում է գործակալությունը:

10. Գործակալությունն իր նախաձեռնությամբ կամ դիմումի հիման վրա կարող է հարուցել վարույթ իրական շահառուների հայտարարագրման սույն օրենքով նախատեսված պահանջների պահպանումը ստուգելու նպատակով, իսկ խախտում հայտնաբերելու դեպքում՝ կիրառել օրենքով սահմանված վարչական պատասխանատվության միջոցներ:

11. Սույն հոդվածով նախատեսված գործառույթներն իրականացնելիս գործակալությունն իրավասու է պետական և տեղական ինքնակառավարման մարմիններից պահանջելու և ստանալու իրական շահառուների վերաբերյալ հայտարարագիր ներկայացնելու պարտականություն ունեցող իրավաբանական անձանց առնչվող տեղեկություններ, այդ թվում՝ հարկային և մաքսային գաղտնիք հանդիսացող տեղեկություններ:

12. Սույն հոդվածով նախատեսված գործառույթներն իրականացնելիս Հայաստանի Հանրապետության քրեական օրենսգրքով արգելված արարքի առերևույթ հատկանիշներ հայտնաբերելու դեպքում, ինչպես նաև եթե տեղեկությունների արժանահավատության առնչությամբ կասկածների առկայության դեպքում իրավաբանական անձը գործակալության պահանջով չի ներկայացնում իր հայտարարագրի հիմքում ընկած պատշաճ ուսումնասիրության փաստաթղթերը կամ դրանք բավարար չեն կասկածները փարատելու համար, գործակալությունը նյութերը եռօրյա ժամկետում ուղարկում է գլխավոր դատախազություն՝ ընդունելով վարչական վարույթը կասեցնելու մասին որոշում:

13. Սույն օրենքի 60.3-րդ հոդվածի 5-րդ մասով նախատեսված պարտականությունը երեք տարի անընդմեջ չկատարելու, ինչպես նաև սույն գլխի կանոններն այլ կերպ բազմակի կամ կոպիտ խախտելու դեպքում գործակալությունը կարող է դիմել դատարան՝ իրավաբանական անձին լուծարելու պահանջով:

14. Մետաղական օգտակար հանածոյի արդյունահանման ոլորտի կազմակերպության առնչությամբ կայացված վարչական ակտն անբողոքարկելի դառնալուց հետո եռօրյա ժամկետում գործակալությունն այդ մասին տեղեկացնում է ընդերքօգտագործման ոլորտի պետական կառավարման լիազոր մարմնին:»:

Հոդված 15. Օրենքի 61-րդ հոդվածում՝

4) 1-ին մասը շարադրել հետևյալ բովանդակությամբ.

«1. Պետական միասնական գրանցամատյանի հրապարակային տեղեկությունները բաց են համընդհանուր ծանոթացման համար:»

5) 2-րդ մասը շարադրել հետևյալ բովանդակությամբ.

«2. Առանց պետական տուրք վճարելու տեղեկատվական համակարգի միջոցով գործակալության պաշտոնական կայքից հասանելի են իրավաբանական անձի, անհատ ձեռնարկատիրոջ և պետական մարմնի վերաբերյալ պետական միասնական գրանցամատյանի հետևյալ տեղեկությունները՝

1) անունը, ազգանունը կամ անվանումը և կազմակերպատիրավական ձևը.

2) պետական գրանցման (հաշվառման) ամսաթիվը.

3) պետական գրանցման (հաշվառման) համարը.

4) հարկ վճարողի հաշվառման համարը.

5) ձեռնարկության կոդային դասակարգիչը (ՁԿԴ).

5) գտնվելու վայրը կամ ձեռնարկատիրական գործունեությամբ զբաղվելու հասցեն.

6) իրավաբանական անձի իրական շահառուի անունը, ազգանունը, քաղաքացիությունը, իրական շահառու դառնալու ամսաթիվը, իրավաբանական անձի իրական շահառու հանդիսանալու հիմքերը.

7) տեղեկություններ լուծարման գործընթացում գտնվելու մասին կամ հաշվառումից հանվելու մասին:».

6) 3-րդ մասում «տրամադրվում են» բառից հետո լրացնել «թղթային կրիչով կամ տեղեկատվական համակարգի միջոցով գործակալության պաշտոնական կայքից» բառերով:

Հոդված 16. Օրենքի 62-րդ հոդվածի 3-րդ մասի 12.1-ին կետն ուժը կորցրած ճանաչել:

Հոդված 17. Օրենքի 66-րդ հոդվածը շարադրել հետևյալ բովանդակությամբ.

«Հոդված 66. Փողերի լվացման և ահաբեկչության ֆինանսավորման դեմ պայքարի նպատակներով տրամադրվող տեղեկությունները

1. Գործակալությունը «Փողերի լվացման և ահաբեկչության ֆինանսավորման դեմ պայքարի մասին» օրենքով սահմանված լիազոր մարմնին է տրամադրում պարտադիր տեղեկացման ենթակա գործարքի և կասկածելի գործարքի կամ գործարար հարաբերության վերաբերյալ հաշվետվություն այդ օրենքով սահմանված կարգով:»:

Հոդված 18.

11. Սույն օրենքն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակման օրվան հաջորդող տասներորդ օրը:

12. Հանրային ծառայությունների կարգավորվող ոլորտում գործունեություն իրականացնող, ինչպես նաև տեսալսողական մեդիածառայություն մատուցող իրավաբանական անձանց համար սույն օրենքով նախատեսված պարտականությունները ծագում են 2021 թվականի սեպտեմբերի 1-ից:

13. Սույն հոդվածի 2-րդ մասում չներառված իրավաբանական անձանց համար սույն օրենքով նախատեսված պարտականությունները ծագում են 2022 թվականի հունվարի 1-ից, բացառությամբ սույն հոդվածի 4-րդ մասում նախատեսված դեպքերի:

14. Միայն ֆիզիկական անձ մասնակիցներ ունեցող սահմանափակ պատասխանատվությամբ ընկերությունների, ինչպես նաև ոչ առևտրային կազմակերպությունների համար սույն օրենքով նախատեսված պարտականությունները ծագում են 2023 թվականի հունվարի 1-ից:

15. Սույն հոդվածի 2-4-րդ մասով նախատեսված օրվա դրությամբ Հայաստանի Հանրապետության տարածքում գրանցված իրավաբանական անձինք պարտավոր են իրական շահառուների վերաբերյալ սույն օրենքով նախատեսված հայտարարագիրը ներկայացնել սույն օրենքով նախատեսված պարտականությունները ծագելու օրվանից երկու ամսվա ընթացքում:

16. Իրավաբանական անձանց իրական շահառուների վերաբերյալ հայտարարագրի ձևը, դրա լրացման և ներկայացման կարգը, իրական շահառուների վերաբերյալ գործակալություն ներկայացված վերջին հայտարարագրի հաստատման կարգը, [իրական շահառուների բացահայտման համարժեք չափանիշներով կարգավորվող շուկաների գանկը](#) արդարադատության նախարարի կողմից սահմանվում է սույն օրենքն ուժի մեջ մտնելուց հետո երկամսյա ժամկետում:

17. Եթե մինչև սույն օրենքի ուժի մեջ մտնելն իրավաբանական անձի կողմից գործակալություն է ներկայացվել իրական սեփականատերերի վերաբերյալ հայտարարագիր, ապա սույն օրենքի հիման վրա այդպիսի իրավաբանական անձի իրական շահառուների վերաբերյալ տեղեկությունների գրանցումը համարվում է իրավաբանական անձի իրական շահառուների փոփոխության գրանցում ««Իրավաբանական անձանց պետական գրանցման, իրավաբանական անձանց առանձնացված ստորաբաժանումների, հիմնարկների և անհատ ձեռնարկատերերի պետական հաշվառման մասին» օրենքի 60.4-րդ հոդվածի 2-րդ մասի իմաստով:

18. Մինչև սույն օրենքի ուժի մեջ մտնելն իրական սեփականատերերի վերաբերյալ հայտարարագիր ներկայացված անձանց վրա սույն օրենքով նախատեսված կարգավորումները տարածվում են 2021~~2~~ թվականի ~~հունվարի սեպտեմբերի~~ 1-ից: Սույն մասով նախատեսված իրավաբանական անձինք պարտավոր են իրական շահառուների վերաբերյալ սույն օրենքով նախատեսված հայտարարագիրը ներկայացնել մինչև 2022 թվականի փետրվարի 20-ը:

19. ~~Կենտրոնական բանկը~~ սույն օրենքի ուժի մեջ մտնելու պահին գործող իր կողմից գրանցած իրավաբանական անձանց իրական շահառուների վերաբերյալ տվյալները տրամադրում է մինչև 2022 թվականի ~~հունիսի 1~~ ~~փետրվարի 20~~-ը:

~~19.20.~~ Մինչև սույն հոդվածի համապատասխանաբար 2-4-րդ մասով նախատեսված ժամկետների վրա հասնելը իրավաբանական անձը պարտավոր է պետական գրանցման, կանոնադրական կապիտալի կամ մասնակիցների կազմի փոփոխվելու դեպքում «Փողերի լվացման և ահաբեկչության ֆինանսավորման դեմ պայքարի մասին» օրենքով սահմանված կարգով գործակալություն ներկայացնել իրավաբանական անձի իրական շահառուների վերաբերյալ հայտարարություն: Հայտարարության մեկ օրինակը տրամադրվում է Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկին՝ վերջինիս պահանջով:

ԱՄՓՈՓԱԹԵՐԹ

«ԻՐԱՎԱԲԱՆԱԿԱՆ ԱՆՁԱՆՑ ՊԵՏԱԿԱՆ ԳՐԱՆՑՄԱՆ, ԻՐԱՎԱԲԱՆԱԿԱՆ ԱՆՁԱՆՑ ԱՌԱՆՁՆԱՑՎԱԾ ՍՏՈՐԱԲԱԺԱՆՈՒՄՆԵՐԻ, ՀԻՄՆԱՐԿՆԵՐԻ ԵՎ ԱՆՀԱՏ ՁԵՌՆԱՐԿԱՏԵՐԵՐԻ ՊԵՏԱԿԱՆ ՀԱՇՎԱՌՄԱՆ ՄԱՍԻՆ» ՕՐԵՆՔՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԵՎ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ ՕՐԵՆՔԻ ՆԱԽԱԳԾԻ ԵՎ ՀԱՐԱԿԻՑ ՕՐԵՆՔՆԵՐԻ ՆԱԽԱԳԾԵՐԻ ՓԱԹԵԹԻ (Կ-945-23.04.2021,24.05.2021-ՊԻ-011/1) ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ՆԵՐԿԱՅԱՑՎԱԾ ԱՌԱՋԱՐԿՆԵՐԻ

№	Առաջարկության (փոփոխության, լրացման) հեղինակը	Հոդվածը, կետը, որին վերաբերում է առաջարկությունը	Առաջարկություն (փոփոխություն, լրացում)	Առաջարկության վերաբերյալ հեղինակի (հիմնական գեկուցողի) եզրակացությունը	Առաջարկություններն ընդունելու կամ մերժելու վերաբերյալ հանձնաժողովի որոշումը
1.	ՀՀ կառավարություն	Նախագծի 1-ին հոդվածի 1-ին մասի 6-րդ կետ	Փոփոխվող կետը շարադրել հետևյալ բովանդակությամբ. «28) միջանկյալ իրավաբանական անձ՝ իրավաբանական անձ և իրական շահառու շղթայում գործող ցանկացած այլ իրավաբանական անձ. »:	Ընդունվել է	Ընդունվել է
2.	ՀՀ կառավարություն	Նախագծի 3-րդ հոդվածի 1-ին մասի 3-րդ կետ	Կետում «լրացնել հետևյալ բովանդակությամբ 29-րդ մասով» բառերը փոխարինել «լրացնել . 29-րդ մասով հետևյալ բովանդակությամբ» բառերով:	Ընդունվել է	Ընդունվել է
3.	ՀՀ կառավարություն	Նախագծի 5-րդ հոդված	Հոդվածով լրացվող 60.3-րդ հոդվածի 2-րդ մասի 3-րդ կետում «ներառյալ՝ գործադիր մարմնի ղեկավարի անունը և	Ընդունվել է	Ընդունվել է

			ազգանունը» բառերը փոխարինել «իրավաբանական անձի պետական գրանցման տվյալները և դրա գործադիր մարմնի ղեկավարի անունը և ազգանունը» բառերով:		
4.	ՀՀ կառավարություն	Նախագծի 5-րդ հոդված	Հոդվածով լրացվող 60.3-րդ հոդվածի 2-րդ մասի 7-րդ կետը շարադրել հետևյալ բովանդակությամբ. «7) միջանկյալ իրավաբանական անձանց վերաբերյալ (իրավաբանական անձի պետական գրանցման տվյալները և դրա գործադիր մարմնի ղեկավարի անունը և ազգանունը).»:	Ընդունվել է	Ընդունվել է
5.	ՀՀ կառավարություն	Նախագծի 5-րդ հոդված	Հոդվածով լրացվող 60.3-րդ հոդվածի 6-րդ մասը շարադրել հետևյալ բովանդակությամբ. «6. Իրավաբանական անձանց իրական շահառուների վերաբերյալ հայտարարագրի ձևը, դրա լրացման և ներկայացման կարգը, իրական շահառուների վերաբերյալ գործակալություն ներկայացված վերջին հայտարարագրի հաստատման կարգը, իրական շահառուների բացահայտման համարժեք չափանիշներով կարգավորվող շուկաների ցանկը սահմանում է արդարադատության նախարարը: Սույն մասով նախատեսված լրացման կարգում արդարադատության	Ընդունվել է	Ընդունվել է

			նախարարի կողմից կարող են նաև սահմանվել «Գնումների մասին» օրենքի հիման վրա իրական շահառուների վերաբերյալ հայտարարագրի ներկայացման պարտականություն ունեցող ոչ ռեզիդենտ իրավաբանական անձանց կողմից հայտարարագրի լրացման առանձնահատկությունները:»		
6.	ՀՀ կառավարություն	Նախագծի 9-րդ հոդվածի 6-րդ մաս	6. Մասում «հաստատման կարգը» բառերից հետո լրացնել «, իրական շահառուների բացահայտման համարժեք չափանիշներով կարգավորվող շուկաների ցանկը» բառերով:	Ընդունվել է	Ընդունվել է
7.	ՀՀ կառավարություն	Նախագծի 9-րդ հոդվածի 8-րդ մաս	Մասը շարադրել հետևյալ խմբագրությամբ. «8. Մինչև սույն օրենքի ուժի մեջ մտնելն իրական սեփականատերերի վերաբերյալ հայտարարագրի ներկայացված անձանց վրա սույն օրենքով նախատեսված կարգավորումները տարածվում են 2021 թվականի սեպտեմբերի 1-ից: Սույն մասով նախատեսված իրավաբանական անձինք պարտավոր են իրական շահառուների վերաբերյալ սույն օրենքով նախատեսված հայտարարագիրը ներկայացնել մինչև 2022 թվականի փետրվարի 20-ը:»:	Ընդունվել է	Ընդունվել է
8.	ՀՀ կառավարություն	Նախագծի 9-րդ հոդվածի 9-րդ մաս	Նշված մասում «փետրվարի 20-ը» բառերը փոխարինել	Ընդունվել է	Ընդունվել է

			«հունիսի 1-ը» բառերով:		
9.	ՀՀ կառավարություն	Նախագծի 9-րդ հոդված	Հոդվածը լրացնել 10-րդ մասով հետևյալ խմբագրությամբ. «10. Մինչև սույն հոդվածի համապատասխանաբար 2-4-րդ մասով նախատեսված ժամկետների վրա հասնելը իրավաբանական անձը պարտավոր է պետական գրանցման, կանոնադրական կապիտալի կամ մասնակիցների կազմի փոփոխվելու դեպքում «Փողերի լվացման և ահաբեկչության ֆինանսավորման դեմ պայքարի մասին» օրենքով սահմանված կարգով գործակալություն ներկայացնել իրավաբանական անձի իրական շահառուների վերաբերյալ հայտարարություն: Հայտարարության մեկ օրինակը տրամադրվում է Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկին՝ վերջինիս պահանջով:»	Ընդունվել է	Ընդունվել է
10.	ՀՀ կառավարություն	«Ընդերքի մասին օրենսգրքում» փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» օրենքի 4-րդ հոդված	Հոդվածով փոփոխվող 5-րդ կետը շարադրել հետևյալ բովանդակությամբ. «5) օրենքով սահմանված ժամկետում չի ներկայացրել իրական շահառուների վերաբերյալ տեղեկություններ կամ ներկայացրել է իրական շահառուի վերաբերյալ կեղծ տվյալ կամ թաքցրել է ներկայացման ենթակա տվյալը	Ընդունվել է	Ընդունվել է

			և չի վերացրել թույլ տված խախտումը դրա վերաբերյալ կայացված դատական ակտի ուժի մեջ մտնելուց կամ վարչական ակտի անբողոքարկելի դառնալուց հետո 30 օրյա ժամկետում կամ սույն օրենսգրքով նախատեսված հիմքերի առկայության դեպքում լիազոր մարմինն չի ներկայացրել իրական շահառուների վերաբերյալ տեղեկություններ բովանդակող քաղվածք:»:		
11.	ՀՀ կառավարություն	«Ընդերքի մասին օրենսգրքում» փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» օրենքի 12-րդ հոդվածի 2-րդ մաս	Մասում «2022 թվականի հունվարի» բառերը փոխարինել «2021 թվականի սեպտեմբերի» բառերով:	Ընդունվել է	Ընդունվել է
12.	ՀՀ կառավարություն	«Էներգետիկայի մասին» օրենքում փոփոխություններ կատարելու մասին» օրենքի 2-րդ հոդվածի 2-րդ մաս	Մասում «2022 թվականի հունվարի» բառերը փոխարինել «2021 թվականի սեպտեմբերի» բառերով:	Ընդունվել է	Ընդունվել է
13.	ՀՀ կառավարություն	«Գնումների մասին» օրենքում փոփոխություն կատարելու մասին» օրենքի 1-ին հոդված	Մասում «հետևյալ խմբագրությամբ» բառերը փոխարինել «հետևյալ բովանդակությամբ» բառերով:	Ընդունվել է	Ընդունվել է
14.	ՀՀ կառավարություն	«Հայաստանի Հանրապետության քրեական օրենսգրքում» լրացում կատարելու մասին օրենքի 1-ին	Հոդվածով լրացվող 216.1-ին հոդվածը շարադրել հետևյալ խմբագրությամբ. «Հոդված 216.1. <i>Իրական</i>	Ընդունվել է	Ընդունվել է

		հողված շահառուների վերաբերյալ կեղծ տեղեկություններ ներկայացնելը կամ ներկայացման ենթակա տեղեկությունները թաքցնելը 1. Իրավաբանական անձանց պետական գրանցում իրականացնող իրավասու պետական մարմնին իրական շահառուների վերաբերյալ հայտարարագիր ներկայացրած անձի կողմից հայտարարագրում կեղծ տվյալ ներկայացնելը կամ ներկայացման ենթակա տվյալը թաքցնելը՝ պատժվում է տուգանքով՝ նվազագույն աշխատավարձի երեքհարյուրապատիկից հինգհարյուրապատիկի չափով՝ որոշակի պաշտոններ զբաղեցնելու կամ որոշակի գործունեությամբ զբաղվելու իրավունքից զրկելով՝ առավելագույնը երեք տարի ժամկետով կամ առանց դրա: 2. Իրավաբանական անձի մասնակցի կամ իրական շահառուի կողմից սույն հոդվածի 1-ին մասում նշված անձին իրական շահառուի վերաբերյալ կեղծ տվյալ ներկայացնելը կամ ներկայացման ենթակա տվյալը թաքցնելը կամ նրա կողմից սույն հոդվածի 1-ին մասում նշված անձի ներկայացրած հարցմանն օրենքով նախատեսված ժամկետում		
--	--	---	--	--

			չպատասխանելը՝ պատժվում է տուգանքով՝ նվազագույն աշխատավարձի երեքհարյուրապատիկից հինգհարյուրապատիկի չափով՝ որոշակի պաշտոններ զբաղեցնելու կամ որոշակի գործունեությամբ զբաղվելու իրավունքից զրկելով՝ առավելագույնը երեք տարի ժամկետով կամ առանց դրա:		
15.	ՀՀ կառավարություն	«Վարչական իրավախախտումների վերաբերյալ օրենսգրքում» լրացումներ կատարելու մասին օրենքի 1-ին հոդված	Հոդվածով լրացվող 169.29-րդ հոդվածի 1-ին մասում «առաջացնում է» բառերից հետո լրացնել «նախազգուշացում կամ» բառերով:	Ընդունվել է	Ընդունվել է
16.	ՀՀ կառավարություն	«Փողերի լվացման և ահաբեկչության ֆինանսավորման դեմ պայքարի մասին» օրենքում փոփոխություններ կատարելու մասին օրենքի 1-ին հոդված	Հոդվածը շարադրել հետևյալ խմբագրությամբ. «Հոդված 1. «Փողերի լվացման և ահաբեկչության ֆինանսավորման դեմ պայքարի մասին» 2008 թվականի մայիսի 26-ի ՀՕ-80-Ն օրենքի (այսուհետ՝ Օրենք) 9-րդ հոդվածում՝ 1) վերնագիրը շարադրել հետևյալ բովանդակությամբ՝ «Հոդված 9. Ֆինանսական հաստատության լիցենզավորման ժամանակ իրականացվող ընթացակարգերը և հաշվետվություն տրամադրող անձանց հաշվառման	Ընդունվել է	Ընդունվել է

			<i>պարտականությունը».</i> <i>2) 1-ին և 2-րդ մասերը ուժը կորցրած ճանաչել:»</i>		
17.	<i>ՀՀ կառավարություն</i>	«Վարկային կազմակերպությունների մասին» օրենքում լրացումներ կատարելու մասին օրենքի 1-ին հոդվածի 2-րդ կետ	Կետով լրացվող 3-րդ մասում «4» համարակալումը փոխարինել «3» համարակալմամբ:	Ընդունվել է	Ընդունվել է
18.	<i>ՀՀ կառավարություն</i>	«Արժեթղթերի շուկայի մասին» օրենքում լրացում կատարելու մասին օրենքի 1-ին հոդված	Հոդվածում «61. 1-րդ» բառերը փոխարինել «61. 1-ին» բառերով:	Ընդունվել է	Ընդունվել է
19.	<i>ՀՀ կառավարություն</i>	«Ներդրումային ֆոնդերի մասին» օրենքում լրացում կատարելու մասին» օրենքի 2-րդ հոդված	Հոդվածում «62. 1-րդ» բառերը փոխարինել «62. 1-ին» բառերով:	Ընդունվել է	Ընդունվել է
20.	<i>ՀՀ կառավարություն</i>	«Ներդրումային ֆոնդերի մասին» օրենքում լրացում կատարելու մասին» օրենքի 2-րդ հոդված	Հոդվածով լրացվող 62.1-ին հոդվածում «Հայաստանի Հանրապետության տարածքում գործող» բառերից լրացնել «իրավաբանական անձ հանդիսացող ներդրումային ֆոնդերի,» բառերով:	Ընդունվել է	Ընդունվել է
21.	<i>ՀՀ կառավարություն</i>		Նախագծերի փաթեթը լրացնել «Հայաստանի Հանրապետության քրեական օրենսգրքում» փոփոխություն կատարելու մասին» օրենքի նախագծով հետևյալ բովանդակությամբ. <i>«Հոդված 1. 2021 թվականի մայիսի 5-ի Հայաստանի</i>	Ընդունվել է	Ընդունվել է

			Հանրապետության քրեական օրենսգրքի 294-րդ հոդվածը շարադրել հետևյալ բովանդակությամբ՝ «Հոդված 294. Իրական շահառուների վերաբերյալ կեղծ տվյալներ ներկայացնելը կամ ներկայացման ենթակա տվյալները թաքցնելը 1. Իրավաբանական անձանց պետական գրանցում իրականացնող իրավասու պետական մարմնին իրական շահառուների վերաբերյալ հայտարարագիր ներկայացրած անձի կողմից հայտարարագրում կեղծ տվյալ ներկայացնելը կամ ներկայացման ենթակա տվյալը թաքցնելը՝ պատժվում է տուգանքով՝ առավելագույնը տասնապատիկի չափով, կամ որոշակի պաշտոններ զբաղեցնելու կամ որոշակի գործունեությամբ զբաղվելու իրավունքից զրկելով՝ առավելագույնը երեք տարի ժամկետով, կամ ազատության սահմանափակմամբ՝ առավելագույնը մեկ տարի ժամկետով, կամ կարճաժամկետ ազատազրկմամբ՝ առավելագույնը երկու ամիս ժամկետով: 2. Իրավաբանական անձի մասնակցի կամ իրական		
--	--	--	--	--	--

			շահառուի կողմից սույն հոդվածի 1-ին մասում նշված անձին հրական շահառուի վերաբերյալ կեղծ տվյալ ներկայացնելը կամ ներկայացման ենթակա տվյալը թաքցնելը կամ նրա կողմից սույն հոդվածի 1-ին մասում նշված անձի ներկայացրած հարցմանն օրենքով նախատեսված ժամկետում չպատասխանելը՝ պատժվում է տուգանքով՝ առավելագույնը տասնապատիկի չափով, կամ որոշակի պաշտոններ զբաղեցնելու կամ որոշակի գործունեությամբ զբաղվելու հրավունքից զրկելով՝ առավելագույնը երեք տարի ժամկետով, կամ ազատության սահմանափակմամբ՝ առավելագույնը մեկ տարի ժամկետով, կամ կարճաժամկետ ազատազրկմամբ՝ առավելագույնը երկու ամիս ժամկետով: Հոդված 2.. Սույն օրենքն ուժի մեջ է մտնում 2022 թվականի հուլիսի 1-ից:»:		
--	--	--	---	--	--